

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության

«Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության»

II Ծրագիր

Արժեշղթաների Ջարգացման II փուլի մրցույթ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» II ծրագիրը, որի բաղադրիչներից է «Արժեշղթաների զարգացումը» (ԱՇՁ): Արժեշղթաների զարգացմանն ուղղված ենթածրագրերը իրականացվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Ենթածրագրերի ընտրությունը կատարվում է մրցույթային կարգով՝ համաձայն գործող ընթացակարգի:

ԱՇՁ Բաղադրիչի նպատակը.

ԱՇՁ բաղադրիչի հիմնական նպատակն է՝ աջակցություն ցուցաբերել կաթի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտղի և մեղրի ոլորտների արտադրողներին, վերամշակողներին և արժեշղթայի այլ մասնակիցներին արտադրանքի որակական ցուցանիշների, ներքին շուկայի պահանջարկի, սննդամթերքի անվտանգության պահանջների բարելավման, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի արտահանման ծավալների ավելացման հարցերում:

Իրավասու հայտատուներ

Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է նպատակային ֆինանսական օժանդակություն տրամադրել ՀՀ օրենսդրությանը համապատասխան և պատշաճ ձևով գրանցված գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին, արտադրական և սպառողական կոոպերատիվներին, գյուղատնտեսական մթերքի և սննդի վերամշակման ձեռնարկություններին (բացառությամբ հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների), որոնք ներգրավված են ընտրված արժեշղթաների մեջ և բավարարում են ծրագրի համապատասխանության և ընտրության չափանիշներին:

Իրավասու հայտատուներից (վերամշակող ձեռնարկություններ և այլն) առաջնահերթություն կստանան այն հայտատուները, որոնք ենթածրագրերի իրականացման ընթացքում լայնածավալ համագործակցություն (պայմանագրային հիմունքներով) կնախատեսեն մեծ թվով ֆերմերային տնտեսությունների հետ:

Նպատակային ֆինանսավորման ուղղությունները.

ԱՇՁ Բաղադրիչի շրջանակներում շահառուներին հատկացվող նպատակային ֆինանսավորման գումարները կարող են օգտագործվել ստորև նշված ծախսերի լրիվ, կամ մասնակի ֆինանսավորման նպատակով.

1. Նոր սարքավորումների , վերամշակման սարքավորումների, ինչպես նաև տրակտորների ձեռքբերում, այդ թվում՝
 - ▶ արտադրության եւ վերամշակման սարքավորումներ,
 - ▶ հետբերքահավաքային մշակման և վերամշակման,
 - ▶ պահեստավորման եւ պահպանման,
 - ▶ լաբորատոր (ներառյալ՝ շարժական եւ հատուկ մասնագիտացած տեխնիկա և սարքավորումներ),
 - ▶ փաթեթավորման եւ տեսակավորման,
 - ▶ որակի վերահսկողության,
 - ▶ բոլոր տիպի սարքավորումներ եւ տեխնիկական հոսքագծեր՝ կապված արտադրանքի որակի բարելավման եւ ծավալների ավելացման հետ:
2. Տեխնոլոգիական վերազինման սարքավորումներ,
3. «ՍԱԿՀ» Սննդի անվտանգության կառավարման համակարգի իրականացման ծախսեր՝ ներառյալ իրականացման ընթացակարգերի բոլոր փուլերը (ուսուցումներ, հետևյալ համակարգերի ներդրում՝ HACCP, ISO, օրգանական արտադրության, պատշաճ գործելակերպի բոլոր տեսակները, հարակից այլ տեխնիկական աջակցություն և այլն),
4. Տեղական և միջազգային հավաստագրերի ձեռքբերման և միջազգային կազմակերպությունների կողմից հավաստագրման ծախսեր
5. Շուկայավարման եւ բրենդինգի ծառայությունների ձեռքբերման ծախսեր ներառյալ՝ առետրային նշանի եւ արտադրանքի արտաքին տեսքի (նաև փաթեթավորման, մշակման եւ այլն),
6. Բոլոր տեսակի բարձրարժեք մրգերի եւ հատապտուղների նոր սորտերի տնկիների ձեռքբերման ծախսեր,
7. Տեխնիկական աջակցության եւ մասնագիտական տեխնիկական եւ շուկայավարման (հատկապես արտահանման խթանման վերաբերյալ) խորհրդատվության ձեռքբերման ծախսեր:

Վերոնշյալ ակտիվների ձեռքբերումը կարելի է ֆինանսավորել ինչպես ԱՇԶ Բաղադրիչի նպատակային ֆինանսավորման, այնպես էլ Շահառուների համաֆինանսավորման հաշվին:

ԱՇԶ բաղադրիչի շրջանակներում չեն կարող ֆինանսավորվել՝

- նախքան դրամաշնորհային համաձայնագրի կնքումը որևէ ձեռքբերման ծախս
 - բնապահպանական առումով վտանգավոր և շրջակա միջավայրի վրա անվերականգնելի բացասական ազդեցություն ունեցող ակտիվների ձեռքբերման ծախսեր,
 - բացասական սոցիալական ազդեցություն ունեցող, կամ տարաբնակեցման ռիսկեր պարունակող ակտիվների ձեռքբերման ծախսեր,
1. շինությունների և հողատարածքների ձեռքբերման և վարձակալության ծախսեր:
 2. շինարարական աշխատանքների իրականացման ծախսեր: Եթե անհրաժեշտ է իրականացնել վերանորոգման որոշակի աշխատանքներ, կապված սննդի

անվտանգության համակարգերի ներդրման հետ, ապա դրանք կարող են ֆինանսավորվել շահառուների կողմից կատարվող ենթածրագրի համաֆինանսավորման միջոցներով,

3. հումքի և շրջանառու միջոցների ձեռքբերման ծախսեր,
4. աշխատանքի վարձատրության և փոխհատուցման ծախսեր ,
5. Շահառուի գործառնական ծախսերը, որոնք հակասում են ԱՇԶ Բաղադրիչի դրույթներին,
6. սարքավորումների վերանորոգման ծախսեր,

Վերջին ցանկի կետերից (1-6) յուրաքանչյուրի մասով շահառուի սեփական ֆինանսական ռեսուրսներից կատարած ծախսերը համարվում են Շահառուների համաֆինանսավորում եւ դիտվում են նրա կողմից ենթածրագրի բյուջեում ներդրման ենթակա 50%-ի համալրում:

Ներկայացվող պահանջներ

Հայտատուի կողմից ներկայացվող Հայտ-դիմումները և Բիզնես-հայտերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

- Առաջարկվող ենթածրագրի տևողությունը պետք է լինի նվազագույնը՝ 12 (ամիս), իսկ առավելագույնը 24 (ամիս):
- Ենթածրագրի նպատակային ֆինանսավորման գումարը պետք է լինի նվազագույնը 8,000 ԱՄՆ դոլար, իսկ առավելագույնը՝ 50,000 ԱՄՆ դոլար,
- ԱՇԶ Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ենթածրագրերի համաֆինանսավորում շահառուի կողմից՝ ենթածրագրի իրականացման բյուջեի առնվազն 50%-ի չափով :
- Շահառուների կողմից ենթածրագրերը պետք է համաֆինանսավորվեն ֆինանսական միջոցներով. ոչ ֆինանսական ակտիվների (հող, անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, աշխատանք և այլն) ներդրումը ԱՇԶ Բաղադրիչի կողմից չի համարվում համաֆինանսավորում: Համաֆինանսավորում է համարվում շահառուի կողմից իրականացվող բացառապես ֆինանսական ներդրումը:
- Ձեռնարկության սննդամթերքի անվտանգության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ:
- Հայտատուն չի կարող մեկ անգամից ավել ստանալ ենթածրագրերի նպատակային ֆինանսավորում:
- Ենթածրագրերի նպատակային ֆինանսավորում չի հատկացվում այն հայտատուներին, որոնք նախկինում անհաջողության են մատնել, կամ ձախողել են որևէ ծրագիր:

Հայտ-Դիմումների ընդունում

Շահագրգիռ հավակնորդները (դիմորդները) իրենց կողմից պատրաստված Հայտ-Դիմումները և պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացնեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի ԱՇԶ քարտուղարություն (ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 54 բ.) մինչև 25.04.2016թ. ժամը 18:00 :

Հայտ-Դիմումները պատրաստում և ներկայացնում են հավակնորդ մասնակիցները՝ իրենց ղեկավարի ստորագրությամբ: Վերջնաժամկետից հետո ներկայացված Հայտ-Դիմումները ենթակա չեն ընդունման ԱՇՁ քարտուղարության կողմից: Էլեկտրոնային փոստով և ֆաքսով ուղարկված Հայտ-Դիմումներն ենթակա չեն ընդունման:

Ծանուցում

Ինչպես ընտրված, այնպես էլ մերժված հայտատուները կտեղեկացվեն գրավոր: Մերժված հայտատուներին կվերադարձվեն իրենց կողմից ներկայացված փաստաթղթերի բնօրինակները:

ԱՇՁ Բաղադրիչի գործունեության և հայտերի պատրաստման կանոնակարգերին մանրամասն ծանոթացնելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի ԱՇՁ քարտուղարության աշխատակազմը պոտենցիալ հավակնորդների համար կկազմակերպի աշխատաժողով՝ կաթի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտղի և մեղրի ոլորտների արտադրողների, վերամշակողների և արժեչղթայի այլ մասնակիցների համար, 22.04.2016թ., ժամը 12:00

հասցե ՀՀ ք. Երևան, Արգիշտիի փող.7 շենք

«Մոսկովյան մշակութազործարարական կենտրոն «Դոմ Մոսկվի» Երևանում»:

Փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ.

Հայտ-Դիմումների պաշտոնական ձևանմուշների լրացման հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ից

Էլեկտրոնային փոստ - info@arspiu.com

Համացանցի կայքէջ - www.arspiu.com, Հեռախոս 29-73-01; 29-73-02; 29-73-03